

Տ. ԵՂԻՇԵ ՔԱՀԱՆԱ ԲԱՐՍԵՂՅԱՆ

Ծնվել է 1965 թ. մարտի 15-ին Իրանի Փերիա գավառի Հազարջրիք գյուղում:

1968 թ. ընտանիքով հայրենադարձվել են Մայր Հայրենիք և բնակություն հաստատել Աշտարակ քաղաքում:

1972—1982 թթ. սովորել և ավարտել է տեղի № 5 միջնակարգ դպրոցը:



1982—1983 ուսումնական տարում ընդունվել է Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարան:

1983—1985 թթ. ծառայել է Խորհրդային բանակում, որից հետո շարունակել է ուսումը հոգևոր ճեմարանում:

1987 թ. ծառայության է նշանակվել Օշականի Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցում:

1990 թ. հունիսի 24-ին, ձեռամբ գերշ. Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանի, ձեռնադրվել է սարկավագ:

1992 թ. փետրվարի 23-ին, ձեռամբ գերշ. Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանի, ձեռնադրվել է քահանա:

Այժմ հոգևոր ծառայության է նշանակվել Գուգարաց թեմում: